

## ԲԱՆԿԱՑԻՆ ՀԱՇՎՈՎ

Բանկային հաշվով փոխանցումներ կարող են իրականացնել թե՛ իրավաբանական, և թե՛ ֆիզիկական անձինք:

Մելլաթ Բանկ ՓԲԸ-ն իրականացնում է դրամական փոխանցումներ ՀՀ տարածքում և արտերկիր՝ տարբեր նպատակներով:

Արտարժույթով փոխանցում իրականացնելու համար անհրաժեշտ է՝

- ներկայացնել շահառուի տվյալները, ինչպես նաև վճարել փոխանցվող գումարը և միջնորդավճարը
- տեղեկացնել փոխանցվող գումարի նպատակը
- անհրաժեշտության դեպքում ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր

ՀՀ դրամով փոխանցում իրականացնելու համար անհրաժեշտ է ներկայացնել վճարման հանձնարարագիր, որում պետք է՝

- ներկայացնել շահառուի տվյալները, ինչպես նաև վճարել փոխանցվող գումարը և միջնորդավճարը
- տեղեկացնել փոխանցվող գումարի նպատակը
- անհրաժեշտության դեպքում ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր

ՀՀ-ից ուղարկվող փոխանցման միջնորդավճարը փոխանցողի կողմից վճարվում է ՀՀ դրամով:

- Փոխանցման մեջ առկա սխալների ուղղումը, ինչպես նաև փոխանցման չեղյալացումը իրականացվում են փոխանցող և ստացող բանկերի հնարավորության սահմաններում և ժամկետներում,
- Կատարված փոխանցումից հրաժարվելու դեպքում միջնորդավճարները և ծախսերը փոխանցողին չեն վերադարձվում

Բանկը պարտավոր է տրամադրել յուրաքանչյուր փոխանցման կատարումը հավաստող փաստաթուղթ (անդորագիր), որտեղ նշված կլինի փոխանցման գումարի չափը, արժույթը, վճարված միջնորդավճարի չափը և այլ մանրամասներ: